Հասցեատեր՝

«Շիրակ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ rouben.hakobyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ՊԼ-039
Խախտում՝	1. «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում «Շիրակ» թիմի կողմից գովազդային կողավահանակների՝ ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից սահմանված շարվածքը չապահովելը, ոչ պատշաճ տեղադրումը ու հեռուստատեսային և ինտերնետային հեռարձակման ժամանակ թերի տեսանելիությունը (Հավելված 1 Ա, 41-րդ և 42-րդ կետեր)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Շիրակ»-«Արարատ-Արմենիա» (1:3), 19.09.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել

նվազագույն աշխատավարձի երեքհարյուրհիսունապատիկի՝ 350,000 ՀՀ դրամի չափով:

2. Խաղի ժամանակահատվածում «Շիրակ» թիմի կողմից գովազդային կողավահանակների՝ ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից սահմանված շարվածքի չապահովման, ոչ պատշաճ տեղադրման ու հեռուստատեսային և ինտերնետային հեռարձակման ժամանակ թերի տեսանելիության համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: